անմոլոր հետեւողի՝ Տէր Խաչատուր, Եւթնարփեան շնորհօք լի վարդապետի, որ բաղում երախտիք ունի ի վերայ մեղաւորիս. Աստուած հատուսցէ զվարձս իւր Է. ապատիկ ի ծոցս իւր, և թագաւորութեան Պարսից փոքր Զահապասին՝ և իշխանութեան զիւղիս Խօճապօղոսին։ Ի թվաբերութեան Հայոց Ռ և Ղ. Գ. որ ետ գրել Ծաղիկն և իւր որդի Ըռստակեսն զսուրբ Աւետարանս ի հալալ և ի արդար վաստակոյն. Գերաքին և իւր որդւոյն ոչ ոք չունի իշխանութիւն ոչ ի Գերաքին հայրենեացն և ոչ ի Ծաղիկին հայրենեացն և ետուն յիշատակ ի դուռն սուրբ Տիրամօր Աստուածածնան, բարեխօս լինի Ծաղիկին, Աւետիքին հոգւոյն և ի նոցա որդւոցն կենացն և հոգւոյն, որ է անմահանալ յաւիտեան. Հայր մեր»։

Գ. Աւետարան գրչեայ՝ գրեալ ի թղթի, զոր Աղուէրծու Յովհաննէս քահանայն վախմ տուեալ է Անապատի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն։ Ի վերջ Ղուկասու Աւետարանին գրի՝

«Գրեցաւ ՌՃԽԷ թվ. ըստ յիշատակարանին։

Ի ՌՃԾԸ թվին Աղուէրծու Յովհաննէս քահանայն վախմ տվեց սուրբ Աստուածածին եկեղեցւոյն Անապատի»։

Ե. Աւետարան Հնդար գիւղի եկեղեցւոյ մէջ, գրուած «Ի թուականիս Հայոց ՋԼԹ (1490) ի դառն և ի շար ժամանակիս, որով նեղիմք յանօրինաց, գրեցաւ Աւետարանս ձեռամբ ումեմն Արիստակէս վարդապետի, ի վանս Սանահնի, յառաջնորդութեան Բարսեղ եպիսկոպոսի, արդեամբք ստացողի սորա ուստա Մեսրովբ Բաբայեան»։

Զ. Աւետարան Կեարմախանի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ, որ զգուշութեան համար պահւում է տեղւոյն Աղէքսանդր քահանայի տանը, որոյ և հայրը բերել է ժողովրդեան հետ 1820 թուին Սպահանի նահանգի Լար գիւղից։ Աւետարանս գրուած է Կաֆայ քաղաքում (Տաւրիկեան Թէոդոսիա քաղաք որ է Ղրիմու Քէֆէ քաղաքը), ընտիր մագաղաթի վրայ, գեղեցիկ գրչութեամբ և սքանչելի ոսկեզօծ նուրբ և պատուական նկարուք Տէրունական պատկերաց. այն է՝ Աւետեաց, Ծը-